

ԿԱՐՄԻՔ

Գրիշա Գազիկի Գասպարյանի

«Անզլերենի տեքստային որմնագրությունը որպես զանգվածային

հաղորդակցության մոդել» թեմայով

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Թվային տեխնոլոգիաների և հաղորդակցման նոր միջոցների զարգացման աննախադեպ տեմպերի համատեքստում ավելի է կարևորվում հաղորդակցության առանձնահատկությունների ուսումնասիրությունը տարբեր գիտությունների տեսանկյունից, որոնց մեջ, բնական է, կենտրոնական դեր է խաղում լեզվաբանությունը: Հաղորդակցության յուրաքանչյուր ձևի կամ միջոցի հետազոտությունը մարդկային հաղորդակցման մի ուրույն կողմ է բացահատում՝ ևս մեկ անգամ փաստելով դրա բազմաշերտ և բազմաբնույթ էության մասին:

Այս առումով արդիական է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գրիշա Գազիկի Գասպարյանի «Անզլերենի տեքստային որմնագրությունը որպես զանգվածային հաղորդակցության մոդել» թեմայով Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսությունը, որը նվիրված է տեքստային որմնագրության բազմակողմանի ուսումնասիրությանը: Որմնագրությունը, որը շատերի կողմից համարվում է վանդալիզմի դրսևորում, իրականում, ապահովում է զանգվածային հաղորդակցություն՝ իր յուրօրինակ դրսևորումներով: Այսպիսով, հետազոտության առարկան «որմնագրության խոսույթն է՝ որպես հասարակությանն տարբեր շերտերի միջև հաղորդակցություն ապահովող միջոց»:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ներկայացված ատենախոսության նպատակն է ուսումնասիրել որմնագրության «խոսույթը ձևավորող և համոզման գործառույթը ապահովող լեզվական և արտալեզվական միջոցները և վերհանել որմնագրության հաղորդակցության մոդելի կառուցման և գործարկման առանձնահատկությունները»:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար առաջադրվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծմանը ատենախոսը հետևողականորեն անդրադարձել է ատենախոսության երկրորդ և երրորդ գլուխներում:

Առաջին գլխում ամփոփվում են որմնագրության ուսումնասիրությանը, մասնավորապես լեզվաբանական քննությանը նվիրված հետազոտությունները,

ներկայացվում հիմնադրությունները, որոնք տեքստային որմնագրությունը դարձնում են առանձին խոսույթ:

Ատենախոսության երկրորդ զլուխը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից, նվիրված է տեքստային որմնագրության վերլուծությանը երեք տարբեր հայեցակերպերից՝ Ռ.Յակոբսոնի կողմից առաջարկված լեզվի գործառույթների, Արիստոտելի՝ համոզման երեք հիմնական ռազմավարությունների, խոսույթի քննադատական վերլուծության: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս լիարժեք վերհանել տեքստային որմնագրության բազմաշերտ խոսույթի առանձնահատկությունները և ամբողջական պատկեր ստանալ: Վերոնշյալ երեք դիտանկյուններից տեքստային որմնագրության օրինակները քննելիս ատենախոսը շեշտը դնում է իմաստաստեղծման լեզվական և արտալեզվական միջոցների վրա:

Ատենախոսության երրորդ զլխում Գ.Գասպարյանը, հիմնվելով իր կողմից իրականացված վերլուծության արդյունքների վրա, ինչպես նաև վերլուծելով տեքստային որմնագրության նմուշները հաղորդակցության իրադրության մասնակիցների հայեցակերպից, փորձ է կատարել դուրս բերել որմնագրության խոսույթի հաղորդակցական մոդելը՝ գծային, երկխոսական և գործարքային տարատեսակներով: Ոչ միայն կատարված համապարփակ իմաստագործաբանական քննությունը, այլև որմնագրության խոսույթի հաղորդակցական մոդելի կառուցումը ապահովում է ներկայացված հետազոտության գիտական նորույթը: Այստեղ, թերևս, նշենք, որ ցանկալի կլիներ, եթե ատենախոսը երրորդ զլխում հատուկ շեշտեր, որ տեքստային որմնագրության հաղորդակցության մոդելը, որը ներկայացված է գծապատկերներով կառուցել է իր հետազոտության հիման վրա՝ հիմնվելով այլ հետազոտողների տեսությունների վրա, ինչը ավելի ակնառու կդարձներ ատենախոսության գիտական նորույթը:

Ներկայացնենք մի քանի դիտարկումներ կատարված վերլուծության մեջ տեղ գտած թերությունների շուրջ, որոնք շտկելու դեպքում աշխատանքը կշահեր:

1. Ատենախոսության 2-րդ զլխի առաջին ենթազլխում օրինակների մանրակրկիտ և հիմնավորված վերլուծությամբ Գ.Գասպարյանը քննարկում է որմնագրության տեքստերը Ռ.Յակոբսոնի կողմից առաջարկված լեզվի գործառույթների տեսանկյունից, ապա, ըստ իր ձևակերպման՝ հիմնվելով այդ վերլուծության վրա թվարկում տեքստերի իմաստաստեղծման լեզվական և արտալեզվական առանձնահատկություններ: Սակայն, դատելով լեզվի գործառույթների վերլուծությունից՝ պարզ չէ, թե ինչու են հենց այդ առանձնահատկությունները նշվել տվյալ ենթազլխում, քանի որ դրանց վերլուծության ժամանակ էլ հղում չի կատարվում լեզվի կոնկրետ այս կամ այն գործառույթին:
2. Շարունակելով որմնագրության տեքստերի իմաստաստեղծման առանձնահատկությունների խնդիրը, ատենախոսը դրանց մի մասն էլ քննարկում է 2-րդ զլխի 2-րդ ենթազլխում՝ Արիստոտելի առաջադրած համոզման երեք

հիմնական ռազմավարությունների շրջանակում, մասնավորապես լոգոսի ձևավորման գործընթացում: Այս դեպքում կրկնվում են որոշ լեզվական և արտալեզվական առանձնահատկություններ, ինչպես օրինակ՝ հակադրությունների գերակշռությունը, հայեցակարգային կենտրոնը: Նմանապես, իմաստաստեղծ առանձնահատկությունների մասին խոսվում է նաև 3-րդ ենթագլխում: Թեև 2-րդ գլխի վերջում ատենախոսը ամփոփում է վերլուծության արդյունքները և համապարփակ ներկայացնում բոլոր առանձնահատկությունները մեկ աղյուսակում, ընդհանուր առմամբ, այդքան էլ պարզ չէ, թե ինչու է նա ընդգրկել որևէ կոնկրետ իմաստաստեղծ առանձնահատկության վերլուծությունը այս կամ այն ենթագլխում, օրինակ՝ պայմանական նախադասությունները համոզման ռազմավարություններին նվիրված 2-րդ ենթագլխում, իսկ երկրորդական նախադասությունների այլ տեսակները որմնագրության խոսույթի քննադատական վերլուծությանը նվիրված ենթագլխում, մասնավորապես փաստարկմանը առնչվող հատվածում, կամ բառախաղը քննարկվում է որմնագրության՝ որպես փաստարկման խոսույթին առնչվող հատվածում, և ոչ թե 2-րդ ենթագլխում՝ համոզման ռազմավարություններից պաթոսին վերաբերող հատվածում:

3. Երկրորդ գլխի 3-րդ ենթագլխում օրինակների մի մասը կրկնվում են (տես էջեր 85, 90, 119), սակայն դրանք այլ տեսանկյունից վերլուծելիս Գ.Գասպարյանը հղում չի անում նույն օրինակի նախորդ վերլուծությանը: Բացի այդ, որոշ օրինակների դեպքում, որոնք ներկայացվում են որպես նկարագրական կամ ցուցադրական (exposition) խոսույթի նմուշ, կարելի չհամաձայնել ատենախոսի հետ, քանի որ դրանցում, մեր կարծիքով, ակնհայտ է փաստարկման խոսույթը (տես էջ 95՝ In the absence of peace and love, we teach war and hate as an escape from the problems we are too lazy to solve – որմնագրության օրինակը ներկայացված է որպես նկարագրական խոսույթի նմուշ, էջ 99՝ Time heals nothing, it just replaces memories որմնագրությունը դարձյալ կարելի է համարել փաստարկային և ոչ թե ցուցադրական, ինչպես ներկայացվում է): 97-րդ և 100-րդ էջերում բերված օրինակների մեծ մասը փաստարկման խոսույթ են ներկայացնում, սակայն քննարկված են նկարագրական կամ ցուցադրական խոսույթի շրջանակներում: Չնայած դրանք քննարկվում են այնպիսի լեզվական առանձնահատկությունների շրջանակում, որոնք կարող են վերաբերել ցանկացած խոսույթի, նպատակահարմար կլիներ նշել դրանց տարբերությունները:
4. Իմաստաստեղծման լեզվական և արտալեզվական բոլոր առանձնահատկությունները քննարկելիս, ատենախոսը սկսել է որմնագրության խոսույթում տվյալ հատկանիշի գործառույթների թվարկմամբ (էջեր 66, 79, 89, 93, 107, 113, 114): Մեր կարծիքով, եթե այդ գործառույթները ատենախոսը դուրս է բերել իր հետազոտության արդյունքում, նպատակահարմար կլիներ դրանք ներկայացնել վերլուծված օրինակներից հետո, իսկ եթե ամփոփել է այլ հետազոտությունների արդյունքները, ապա ցանկալի է տալ հղումներ:

Եվ վերջում, ավելացնենք, որ սեղմագրում, որը ներկայացված է հայերեն, որպես գրաֆիտի եզրույթի համարժեք տրված է որմնագրություն բառը, սակայն մեր կարծիքով պետք էր թողնել միջազգային եզույթը տառադարձությամբ, քանի որ որմնագրություն բառը ենթադրում է փորագրություն, ինչը բնորոշ չէ ժամանակակից գրաֆիտի երևույթին:

Ինչպես կարելի է տեսնել վերը նշվածից, դիտողությունները հայեցակարգային չեն, կասկածի տակ չեն դնում հետազոտության արժեքը, նորույթը և գիտականությունը: Հետազոտությունը ներկայացնում է և տեսական, և գործնական արժեք: Այն ընդլայնում է զարգվածային հաղորդակցության առանձնահատկությունների և հնարավորությունների մասին մեր պատկերացումները: Հաղորդակցության տեսության և տեքստի լեզվաբանության ոլորտներում հետազոտությունները կարող են հիմնվել ներկայացված ուսումնասիրության արդյունքների վրա: Այն կարող է գործնական կիրառություն ունենալ նաև մի շարք լեզվաբանական դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության սեղմագրում արտացոլված են ատենախոսության մեջ ներկայացված վերլուծության արդյունքերը և եզրակացությունները, իսկ ատենախոսության հիմնական դրույթները համապատասխանաբար արտացոլված են հրապարակումներում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Գրիշա Գագիկի Գասպարյանը արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանին և միջնորդում ենք Երևանի պետական համալսարանում գործող Օտար լեզուների 009 մասնագիտական խորհրդին նրան շնորհելու այդ աստիճանը:

Գրախոս՝ Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ Լիլիթ Բադալյան

31.01.2022

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ Լիլիթ Բադալյան

